

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Երևանի թիվ 110 հիմն. դպրոց  
Առարկա՝ Կենսաբանություն  
Թեմա՝ Բույսը և երաժշտությունը, ֆուտոսինթեզ  
Վերապատրաստող՝ Նարինե Կուրեղյան  
Ուսուցչուհի՝ Աելիտա Սողոմոնյան

## Բույսը և երաժշտությունը

Երաժշտությունն ընկալվում է մարդկանց կողմից: Ապացուցված է նաև դրա ազդեցությունը կենդանիների վրա: Հարց է ծագում՝ կարո՞ղ է արդյոք, երաժշտությունն ազդել նաև բույսերի վրա:

Կապը երաժշտության և բույսերի միջև ոչ այնքան հեռավոր անցյալում երևակայական էր համարվում, իսկ այժմ այն բազմաթիվ նոր փաստերով ստացել է գիտական հիմնավորում: Պարզվել է, որ երաժշտությունը բարձրացնում է ցանքի արդյունավետությունը, նպաստում է բույսերի զանգվածի ավելացմանը, ակտիվացնում է դրանց ծաղկումը, ազդում է ծաղիկների գույնի փոփոխության վրա, արագացնում է պտուղների հասունացումը և բարձրացնում դրանց որակը, ընդ որում ապացուցվել է, որ երաժշտության ազդեցությամբ բույսերում արագանում է նյութափոխանակությունը, ինտենսիվանում է ֆոտոսինթեզը, ավելանում է նրանցում սինթեզվող վիտամինների և ֆիտոնցիդների քանակը, փոխվում է ֆերմենտների ակտիվությունը, բարձրանում է բջջաթաղանթների թափանցիկությունը, արագանում է շնչառությունը:

Այսպես, օրինակ, երաժշտության ազդեցությամբ ցորենի բերքն ավելացել է 66%-ով, բրնձինը՝ 60%-ով, ծխախոտինը՝ 50%-ով, նարնջի հյութի մեջ C վիտամինի քանակությունը ավելացել է մոտ 12 անգամ: Հետաքրքիր է այն փաստը, որ բույսերը գերադասում են ունկնդրել հանգստացնող երաժշտություն, իսկ աղմկոտ երաժշտության ներքո, հատկապես դրամատիկ պահերին նրանց կենսական ակտիվությունը պակասում է, փոքրանում են տերևների և արմատների չափերը, պակասում է բույսի ընդհանուր զանգվածը: Կարևոր է նշել, որ այդ դեպքերում բույսերը նույնիսկ թեքվում են ձայնի աղբյուրին հակառակ կողմ՝ կարծես ցանկանալով խուսափել այդ երաժշտության բացասական ազդեցությունից: Բույսերը զանազանում են ոչ միայն երաժշտության բնույթը, այլև դրա հնչեղության աստիճանը: Առավել լավ արդյունք է տալիս 5 կիլոհերց հաճախականությամբ ձայնը: Ընդ որում, տարբեր բույսերի վրա ձայները, կախված իրենց հաճախականությունից և այլ առանձնահատկություններից, տարբեր ազդեցություն ունեն: Կարելի է ասել, որ բույսերի տարբեր խմբեր երաժշտությունն ընկալում են ընտրողաբար:

Բերենք գոյություն ունեցող փաստերից մի քանիսը.

- դդմենու ցանքի ժամանակ գերադասելի է երգչախմբային երաժշտությունը;
- վարսակի ցանքի ժամանակ ավելի բարենպաստ է կանանց երգեցողությունը;
- բանջարանոցային կուլտուրաների ցանքի ժամանակ պարկապուկի և շվիի նվազակցությունը;
- իսկ կտավատի ցանքը նպատակահարմար է կատարել երգի և դրա նվազակցության պայմաններում:

Ամերիկացի հետազոտող Դան Կառլսոնը ջութակի և թավջութակի համար գրված Բախի և Վիվալդիի երաժշտության և արտարժատային սննդարար լուծույթի օգնությամբ աճեցրել է աշխարհում ամենամեծ բույս՝ 160 մ.երկարություն ունեցող չարչարա ծաղիկը (*Passiflora*), այն դեպքում, երբ այդ բույսի սովորական բարձրությունը 54 սմ-ից չի անցնում: Արտարմատային սնուցման և երաժշտության համատեղ ազդեցության պայմաններում ակտիվանում են ֆիզիոլոգիական և կենսաքիմիական պրոցեսները, հերձանցքների թիվը, ավելանում է ածխաթթու գազը և ջրի կլանումը, այսինքն ակտիվանում է ֆոտոսինթեզը, ինչպես նաև աճի խթանիչների քանակը: Դրանով էլ ավելանում է բույսի ընդհանուր զանգվածը:

Ո՞րն է բույսի և երաժշտության կապի կենսաբանական մեխանիզմը: Հայտնի է, որ բույսերը չունեն զգայարաններ և նյարդեր, բայց նրանցում կա այս կամ այն ազդեցությունն ընկալելու և կենսահոսանքներով տեղեկատվություն հաղորդելու միջոցով գործող հետադարձ կապի յուրահատուկ համակարգ: Բույսի տարբեր մասերում տեղավորված են միմյանց հետ կենսաելեկտրական պրոցեսներով կապված նյարդային ուղիներ՝ ֆլումային խրձեր, մերիստեմա, ոեցեպտորային սպիտակուցներ, ֆիտոքրոմներ, որոնք փոխարինում են բույսերում բացակայող նյարդային համակարգին:

Այս բնագավառի ուսումնասիրությունները հնարավորություն են տվել ձևավորելու ներկայումս զարգացող ֆիտոպսիխոլոգիա (բուսահոգեբանություն) ուղղությունը:

Մի քանի խոսք նաև մարդկանց նկատմամբ բույսերի ռեակցիայի վերաբերյալ: Պարզվել է, որ բույսերն ընկալում են մարդկանց տրամադրության փաղաքշական վերաբերմունքը և հակառակ՝ կոտրելու, այրելու և այլ վնասներ պատճառելու նրանց ցանկությունը:

Հետաքրքիր են Տոկիոյի Ելեկտրոնային ,հետազոտությունների տնօրեն Կեն Հաշի Մոտոյի դիտարկումները: Նրա կինը, որը շատ էր սիրում ծաղիկներ, մշտապես խոսում էր իրենց տանն աճող կակտուսի հետ: Հետազոտողը բովսի մեջ հայտաբերեց Ելեկտրական ակտիվության ռեակցիա, որն արձանագրվում էր նուրբ, սիրալիր վերաբերմունքից, տերևները և մսալի ցողունը շոյելու դեպքում: Փորձում հաջողվեց Ելեկտրական ազդակները փոխակերպել ձայնային ազդանշանների և բույսը խոսեց: Դա հիշեցնում էր բարձր լարվածության Ելեկտրական գծերի ձայները և բազմազան տոնայնության և ոիթմի այլ ձայներ: Բնության մեջ՝ որպես ամբողջական համակարգում, տարբեր երևույթների փոխադարձ կապը, համամասնությունը և ներդաշնակությունը բնական ընտրության և երկարատև Եվրոպիայի արդյունք են :

# Միջառարկայական կապերը կենսաբանության դասավանդման գործընթացում «Ֆոտոսինթեզ» թեմայի օրինակով

Մանուկ հասակից մարդուն հետաքրքրում և գրնակում է նրան շրջապատող աշխարհը:Ճանաչելու, իմանալու, ուսումնասիրելու մանկական պահանջը պայմանավորված են կենսաբանորեն՝ մարդը ծնվում է հետազոտող:

Ինչ է Արևը,ինչու անձրևից հետո երկինքը փայլատակում է գունագեղությամբ:Ինչու է տերևը կանաչիսկ աշնանը դեղին,կարմիր,նարնջագույն:ինչով է պայմանավորված կանաչ գույնը:Որտեղից է թթվածինը որով շնչում ենք.

Ինչու պետք է խնայողաբար օգտագործել կանաչ աշխարհը,մայրենի բնությունը:

Նման շատ հարցերի պատասխանները պետք է լինեն մատչելի և գրագետ, միաժամանակ հետաքրքրություն շարժող,նպաստեն սովորողների տրամաբանական մտածողությանը:


Այս և շատ հարցերի պատասխանները տալիս է Կենսաբանությունը:Կանգ առնենք ֆոտոսինթեզ թեմայի վրա:Ֆոտոսինթեզ թեմայի ուսումնասիրման հիմքը դրվում է VI-րդ դասարանում՝ «Լույսը և գույնը բնության մեջ»,«Ծիածան»,«Տերևի կառուցվածքը և նշանակությունը բույսի կյանքում»:Թեման զգալի չափով կապվում է «Սննդառություն» թեմայի հետ (VI-րդ դաս.): «Ֆոտոսինթեզ» թեմային աշակերտները առավել մանրամասն ծանոթանում են IX և X դասարաններում: Այս տարիի սովորողները որոշակի գիտելիքներ ունեն «Կենսաբանություն» ցիկլի առարկաներից, քիմիայից, ֆիզիկայից, աշխարհագրությունից, էկոլոգիայից:Բնության երևույթները մի միասնական ամբողջություն են և հասկանալու համար անհրաժեշտ է միասնական մոտեցում, այսինքն այլ երևույթների հետ բազմակողմանի կապերի և հարաբերությունների մեջ:

Արդի կրթության համակարգում ինտեգրումը թույլ է տալիս բացառել առարկաների միակողմանի մոտեցումները և իրագործել միջառարկայական կապեր ամենատարբեր առարկաների թեմաների շուրջ: «Ֆոտոսինթեզ» թեմայի դասավանդման արդյունավետությանն ուղղված հիմնական պահանջներն են.


- Աշակերտների ուսումնական գործունեության կազմակերպումը միջառարկայական կապերի ապահովմամբ:
- Ֆոտոսինթեզի պրոցեսի փուլերի, օրինաչափությունների մոդելավորման ունակություններին տիրապետումը:
- Միջառարկայական կապերի իրականացման գործում տարբեր մոտեցումների, ձևերի և միջոցների արդյունավետ օգտագործումը:

Նախ կարևորենք միջառարկայական կապերում ժամանակային գործոնը: Թեման ուսումնասիրելիս աշակերտները ունեն որոշակի գիտելիքներ Կենսաբանական ցիկլի հետևյալ թեմաների շուրջ՝ Բույսերի անատոմիա և մորֆոլոգիա. Բույսը


ամբողջական կենդանի օրգանիզմ. Օրգան համակարգերի կառուցվածք և ֆունկցիա. Նյութափոխանակություն. Բույս միջավայր. Դարվինի տեսություն:




«Քիմիա» առարկայից աշակերտները ծանոթ են ասում, մոլեկուլ, նյութ, պարբերական համակարգ, անալիզ, սինթեզ, ասխմիլյացիա-դիսխմիլյացիա, քիմիական ռեակցիաներ, ֆերմենտներ հասկացություններին:




«Ֆիզիկա» առարկայից զիտեն ինչ է օսմոսը, դիֆուզիան, Էներգիան, քվանտը, սպեկտրալ վերլուծությունը:





Ֆոտոսինթեզը՝ Արեգակ-երկիր, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական երևույթների կապը և ամբողջականությունը արտահայտող երևույթ է: Լուսի ճառագայթները հասնում են երկիր: Դա երևույթի ֆիզիկական կողմն է: Երկիր հասած ճառագայթները հավասարապես են տարածվում: Բույսերը աճում են և զարգանում, ձևավորվում են պտուղներ և սերմեր: Այսինքն ֆոտոսինթեզի արդյունքում բույսերում լուսային էներգիան կուտակվում է օրգանական նյութերի ձևով:

ա) Ֆոտոսինթեզի պրոցեսը՝ բուսական օրգանիզմների այցեքարտն է: Այն բազմաստիճան օքսիդա-վերականգնման ռեակցիաների շղթա է, որի ընթացքում քլորոֆիլի մոլեկուլում արեգակնային էներգիայի ազդեցությամբ անօրգանական նյութերից՝ ջրից և ածխաթթու զագից, սինթեզվում են օրգանական նյութեր և անջատվում է թթվածին:



Ֆոտոսինթեզի պրոցեսի բանաձևը հասկանալու համար անհրաժեշտ է միավորել և համադրել զիտելիքները քիմիայից, ֆիզիկայից, մաթեմատիկայից:

Բանաձևի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ այն օքսիդա-վերականգնման պրոցես է, որում ջուրը օքսիդանում է մինչև թթվածին, իսկ ածխաթթու զագը վերականգնվում է ածխաջրերի:

Քիմիական հասկացություններ, «Օքսիդացություն» և «Վերականգնություն» կարևոր են ֆոտոսինթեզի ընկալմանը: Ան որ օքսիդացումը ոչ միայն թթվածնի միաց էլեկտրոնների անջատում, մինչ դեռ վերականգնությունը պատճենագործում է և էլեկտրոնների, պրոտոնների միացումը:

«Լանգմում» չափագանց ակերտների հետ հիշել, որունների և գա թթվածնի անջատումն է

Աշակերտների մոտ հարց, տարակուսանք կարող է առաջանալ բանաձևի հավասարման շուրջ՝ ինչու՞ ըստ մաթեմաթիկական զիտելիքների չեն՝

կրծատվում հավասարման երկու կողմերում գտնվող ջրի մոլեկուլները: Օգնության են զալիս գիտելիքները ֆիզիկայից, քիմիայից՝ թթվածնի (16Օ, 17Օ, 18Օ) իզոտոպների վերաբերյալ: Խնդիրը նրանում է, որ թթվածինը ստացված ջրից, օդից և գոյացող ֆոտոսինթեզի արդյունքում ունի իզոտոպների նույն հարաբերակցություն, իսկ ածխաթթու գազի թթվածինը պարունակում է համեմատաբար ծանր իզոտոպներ: Հավասարման աջ կողմի ջրի մոլեկուլի թթվածինը գալիս է ածխաթթու գազից և նույնպես ունի իզոտոպների նույն հարաբերակցություն, ինչ ածխաթթու գազը: (այս վերցրածը բացատրել է կրանին մեծ պարզ գրված ֆոտոսինթեզի բանաձևի վրա):

Ելեկտրոն, էներգետիկ մակարդակներ, քվանտ, սպեկտրալ վերլուծություն՝ գուտ ֆիզիկական և մի շարք ֆոտոքիմիական հասկացություններ, օգնում են հասկանալ ինչ փոփոխությունների է ենթարկվում քլորոֆիլի մոլեկուլը լույսի քվանտ, կլանելուց: Ըստ ֆոտոքիմիայի օրենքների, որոշ նյութեր կարող են կլանել լույսի էներգիան և միայն կլանված ճառագայթները կարող են օգտագործվել քիմիական ռեակցիաներում: Նման կլանելու ընդունակությամբ է օժոված քլորոֆիլի մոլեկուլը: Քլորոֆիլը օպտիկական սենսիբիլիզատոր է՝ ֆոտոսենսիբիլիզատոր (լատ sensibilis-զգայուն)՝ կլանում է լույսի էներգիան: Ֆիզիկայի դասընթացից զիտելիքները օգնում են հասկանալ ֆոտոսինթեզի ինտենսիվության մեխանիզմը, ելնելով սպեկտրի առանձին հատվածների բնութագրից: Խնդիրը նրանում է, որ ածխաթթու գազի առավել ինտենսիվ յուրացում է դիտվում կարմիր ճառագայթներում:


Բնական ընտրության գործընթացում բույսերը հարմարվել են կլանել այն ճառագայթները, որոնց էներգիան առավել արդյունավետ է ֆոտոսինթեզի պրոցեսում: Այդպիսին են կարմիր ճառագայթները՝ երկարալիք, մանր, ցածր էներգիայի քվանտներով: Փիզիկայից զիտենք, որ քվանտը փոքրագույն մասնիկ է, չափաբաժին:

Էվոլյուցիոն գործընթացում բույսերում ձևավորվել է մեխանիզմ առավել լիարժեք օգտագործել լույսի քվանտները՝ տերևի վրա ընկնող ինչպես անձրևի կաթիները:

Ալիքը երկարու թյուն (նմ)	Հաճախականություն նույթուն (իզ)	Ելք բախտություն հարցունք	Ելքունի ուսուցչունի կարգը
Դաշտավայրական	400	$11.8 \cdot 10^{-1}$	4.88
Առավագագուն	400-424	$7.31 \cdot 10^{-1}$	3.02
Կառույթ	424-491	$6.52 \cdot 10^{-1}$	2.70
Համայնք	491-550	$5.77 \cdot 10^{-1}$	2.39
Համայնք	550-585	$5.17 \cdot 10^{-1}$	2.14
Առավագագուն	585-647	$4.94 \cdot 10^{-1}$	2.00
Համայնք	647-740	$4.41 \cdot 10^{-1}$	1.82
	740	$2.14 \cdot 10^{-1}$	0.88
			85.5


(Աղ.1) Սպեկտրի առանձին հատվածների բնութագիրը



Տերևի լուսականիչ՝ ֆոտոսինթիլիզացնող հատկությունը հնարավոր է դառնում ուսումնասիրելով տերևի անատոմիական կառուցվածքը, նրանում առկա պլաստիդները համապատասխանում են նրա ֆունկցիային՝  $\text{CO}_2$ -ի և արևի էներգիայի մաքսիմալ կլանմանը: «Տերևի կառուցվածք» թեմայից զիտենք, որ այն ունի ակտիվ լուսասինթեզող մեզոֆիլի բջիջների մի քանի շերտ, էպիդերմիս բազմաթիվ հերձանցքներով, որոնց միջոցով է իրականացվում է գազափոխանականությունը: Գազափոխանակության և նյութերի տեղաշարժին մասնակցում է փոխադրող համակարգը (անոթամանրաթելային խրձերի, միջբջջային օդատար ուղիները):



(նկ.6)Տերևի կառուցվածքը (արևածաղկի օրինակով)


Տերևը օժտված է 2 ֆունկցիայով՝ էներգիա կլանելու և էներգիա փոխանցելու: «Էվոլյուցիոն գործընթաց», «հարմարվածություն» թեմաների միջոցով բացատրելի է ինչու տերևներում միջարդավոր քլորոֆիլի մոլեկուլներից միայն 200-400-են ներգրաված լույսի կլանման և փոխանցման գործընթացներին: Այդ մոլեկուլները կազմում են լուսահավաք կոմպլեքս. (նկ.7) Լուսահավաք կոմպլեքսը (ԼՀԿ) (նկ.7) կատարում է անտենայի դեր՝ կլանում է լույսը և փոխանցում գրգռման էներգիան ռեակցիոն կենտրոն: ԼՀԿ-ում բացի մի քանի հարյուր քլորոֆիլի մոլեկուլներից, առկա են լրացուցիչ գունակներ՝ կարոտինուիդներ և ֆիկոֆիլիններ (որոշ ջրիմուտների մոտ): Լրացուցիչ գունակները կլանում են լույսը սպեկտրի այն հատվածներում, որտեղ քլորոֆիլի մոլեկուլները թույլ են կլանում լույսը և այնուհետև փոխանցում քլորոֆիլին:






Փորձերը ցույց են տվել, որ քլորելլան միաժամանակ լուսավորելով կարձալիք (650 նմ) և (700 նմ) կարմիր լույսով էֆեկտը՝ քվանտային ելքը եղել է ավելի բարձր: Կարմիր կարծ (650 նմ.) և երկար (700 նմ.) ալիքներ ֆիզիկական հասկացությունները միավորվելով բերում են Էմերառնի էֆեկտ հասկացությանը: Էմերառնի էֆեկտի բացահայտմամբ՝ ներառարկայական կավերի գուգակցմամբ, հանգում ենք քլորոպլաստներում գործող փոխկապակցված երկու ֆոտոհամակարգեր հասկացությանը: I ֆոտոհամակարգը ընդգրկում է (կլանում են) երկարալիք ո700 կարմիր ճառագայթներ և փոխադրող սպիտակուց ֆերմենտները: Այն էվոլյուցիոն առումով ավելի վաղ է առաջացել և գործում է ներկայում ֆոտոսինթեզող բակտերիաներում որոնց մեջ լուսային փուլում չկա ջրի քայրայում և թթվածնի արտազատում և էնեկտրոնների դոնոր են ծծմբաջրածինը, ջրածինը, մեթանը և նման հեշտ օքսիդացող միացություններ: Ֆոտոսինթեզի լուսային փուլում վերականգնվում է ՆԱԿՖ-ն երկու ֆոտոհամակարգերի մասնակցությամբ: II-րդ ֆոտոհամակարգում կլանվում են ո680 կարմալիք կարմիր ճառագայթները և կատարվում է ջրի ֆոտոինդուկցված օքսիդացում, իսկ ՆԱԿՖ վերականգնվում է I-ին ֆոտոհամակարգում:


Դրանով ապահովվում է լուսի էներգիայի առավել լիարժեք օգտագործումը:  
Լուսի էներգիայի օգտագործումը պահանջում է ֆերմենտների մեծ քանակություն:  
Տերևի մակերեսը չեր բավարարի բոլոր անհրաժեշտ ֆերմենտատիվ  
համակարգերի տեղադրման համար: Հիշենք, որ մեկ քլորոպլաստում առկա է  
մինչև 1 միլիարդ քլորոֆիլի մոլեկուլ: Էվոլյուցիայի ընթացքում ձևավորվել է  
մեխանիզմ՝ հնարավորություն ստեղծող առավել լիարժեք օգտագործել լուսը  
փոքր բաժիններով՝ քվանտներով: Լուսի քվանտների էներգիան կլանվում է ԼՀԿ-  
ի 200-400 քլորոֆիլի մոլեկուլներով և կարոտինոփիլներով և հավաքվում ռեակցիոն  
կենտրոն: Նկարագրած ֆոտոսինթեզի ֆոտոֆիզիկական փուլն է՝ դրսեորդող  
ֆիզիկական և քիմիական երևույթների կապով: Ռեակցիոն կենտրոն փոխանցված  
էներգիան օգտագործվում է ֆոտոսինթեզի լուսային փուլում՝ ջրի ֆոտոլիզի,  
թթվածնի անջատման և քլորոպլաստների մեմբրաններում ԱԵՖ-ի սինթեզի  
համար:



Միջառարկայական կապերի կիրառման նպատակներից մեկը դա դասերին ձեռք  
բերած զիտելիքներն ու ընդհանրացումները սեփական զիտելիքների համակարգ  
ներառելն է: «Երկարալիք», «կարճալիք ճառագայթներ», «Էներգիա»  
հասկացությունների բովանդակությունը և ծավալը ձևավորվում են ֆիզիկայի  
(մատերիայի շարժման կեկտրամագնիսական, միջուկային ձևեր), քիմիայի  
(քիմիական ռեակցիաների էներգիա), կենսաբանության (մատերիայի շարժման  
կենսաբանական ձևեր), միջառարկայական կապերով:



Արդյունքում տիլակոխների ներքին խոռոչում կուտակվում են պրոտոններ, իսկ արտաքին կողմում՝ էլեկտրոններ: Եթ թաղանթի վրա առաջացած էլեկտրոնների քիմիական ( $H^+$ ) պոտենցիալը հասնում է սահմանային մակարդակի, պրոտոնները ( $H^+$  և  $e^-$ ) ջրածնային պոմպերի օգնությամբ տեղափոխվում են մեմբրանի արտաքին կողմը և տեղափոխման ժամանակ առաջացած էներգիան օգտագործվում է ԱԵՖ-ի սինթեզի համար: Արտաքին թաղանթ տեղափոխված  $H^+$  իոնները միանում են էլեկտրոններին: Ջրածնի վերականգնված ատոմները ( $H^+ + e^- \rightarrow H$ ) միանում են ՆԱԿՖ-ին: ԱԵՖ-ը և ՆԱԿՖ մտնում են մթնային փուլ մինչև օրգանական նյութի առաջացում:  $CO_2$ -ի օգտագործմամբ:  $CO_2$ -բույս-կենդանակենդան տարրերի կապը՝ համակարգի դրսնորում է: Քիմիական հակասությունների (ֆերմենտ, օքսիդա-վերականգնման ռեակցիաներ) միջոցով պարզաբանվում է մթնային փուլի էությունը: Այն կենսաքիմիական ռեակցիաների ամբողջություն է, որի արդյունքում մթնոլորտի ածխաթթու գազը յուրացվում է բույսերի կողմից, վերականգնվում մինչև ֆոտոսինթեզի վերջնական արգասիքները՝ ածխաջրերի: Գործընթացի պացահայտման համար Մ. Կալվինը արժանացել է Նոբելյան մրցանակի (1961): Սախարովի մեկ մոլեկուլի առաջացման համար անհրաժեշտ է Կալվինի ցիկլի 4 հաջորդող փուլեր: Կալվինի ցիկլը կազմված է 3 փուլերից՝ կարբոքսիլացման, վերականգնման, ռեգեներացիայի (գծ. 2):




Մթնային փուլի պարզեցված բանաձևն է՝




Ֆոտոսինթեզի փուլերի բացատրությունը որոշվում է ոչ այնքան և ոչ միայն առանձին թեմայի ուսումնասիրման տրամաբանությամբ, որքան ընդհանուր գիտելիքների և մտածողական պրոցեսների ուղղվածությամբ՝ մատերիայի պարզ ձևերից բարդ ձևերին, ընդհանուր, հակառակ գուգորդություններից՝ միջառարկայական գուգորդումներին:

Նույն սկզբունքով փոխադրելով հիմնարար քիմիական հասկացությունները՝ «նյութի կառուցվածք», «վալենտականություն», «քիմիական կապեր», ֆոտոսինթեզ թեմայի ուսումնասիրման ոլորտ, հաջողվում է պարզել՝ ինչու է քլորոֆիլը կանաչ գույնի: Այն բացատրելի է քիմիական մակարդակով: Ուսուցման արդյունավետության գործում կարևորվում է ուսուցչի փորձարարական ունակությունների և հմտությունների մակարդակը, համապատասխան ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը, որտեղ գուգակցվում են մի շարք հարակից գիտություններ: Անկրկնելի «բնական այդ լաբորատորիան» անհնար է վերարտադրել լաբորատոր պայմաններում: Սակայն բնագիտական առարկաների գիտելիքներն (մասնավորապես քիմիայից) իրենց փոխադրձ կապերով հնարավորություն են ստեղծում լաբորատոր ուսումնասիրությունների կազմակերպումը:




Ֆոտոսինթեզի գլխավոր նյութերից՝ քլորոֆիլի սպիրտային մզվածքի միջոցով հնարավոր է դառնում պարզաբանել քլորոֆիլի բնութագրական կանաչ գույնի բացատրությունը, ֆիզիկական, քիմիական հատկությունները: Քիմիական ուսակցիաների միջոցով աշակերտները հաստատում են իրենց տեսական գիտելիքները, որ քլորոֆիլի կանաչ գույնը պայմանավորված է նրա քիմիական կառուցվածքով՝ մոլեկուլի կենտրոնում գտնվող երկարժեք մազնեզիումով՝ շրջապատված չորս պիրոլային օղակների ազոտի ատոմներին (նկ3):

Քիմիական փորձերի միջոցով աշակերտները համոզվում են, որ մազնեզիումի անջատումով կանաչ գույնը դառնում է գորշավուն և նորից վերականգնվում, եթե մոլեկուլի կենտրոնում հայտնվում է երկարժեք պոլինձ կամ ցինկ: Քլորոֆիլի մոլեկուլի կառուցվածքից հանգում ենք կարևոր օրինաչափության բացահայտման՝ քլորոֆիլի և հեմոգլոբինի կառուցվածքային նմանությանը: Երկուսի մոտ էլ մոլեկուլի կառուցվածքի հիմքը չորս պիրոլային օղակներն են: Իրոք քլորոֆիլը պարունակում է մազնեզիում-պորֆիրիններ, իսկ հեմինը (կարմիր գույնի)՝ երկաթպորֆիրիններ (կենտրոնում երկարն է): Նմանությունը պատահական չէ և ևս մեկ անգամ հանգում ենք կարևոր օրինաչափության բացահայտման՝ օրգանական աշխարհի միասնականության գաղափարին:




Արդյունքում ել միջառարկայական կապերը քիմիա-կենսաբանության նպաստեցին առարկաների միջև առանձին հասկացությունների ավելի լայն իմաստավորմանը:


«Ֆոտոսինթեզ» թեմայում «լուսային և մթնային փուլեր», արտաքին և ներքին գործոնների դերը, էլեկտրոնների ցիկլիկ և ոչ ցիկլիկ հոսք օրինաչափությունները վերլուծելիս, հաճախ ենք դիմում աղյուսակների, դիագրամների, գծապատկերների: Այս հասկացությունների և գործընթացների տարածական նկարագրերը, ֆոտոսինթեզի պրոցեսի հավասարումների դինամիկ համակարգը ստացվում են հաշվարկների, մաթեմատիհական բանաձևների միջոցով՝ այսինքն գործ ունենք գուգակցվող գիտական օրինաչափությունների մոդելավորման հետ: Օրինակ, ֆոտոսինթեզի օրական ոիթմը, ֆոտոսինթեզի կախվածությունը ջերմաստիճանից, լուսից գծապատկերները կազմվում են պարզ թվարանական հաշվարկների օգնությամբ: Աշակերտները պետք է կարողանան ոչ միայն պատկերել ֆիզիոլոգիական գործընթացը, այլև և այն կարդան:



(գծ.3) Ֆուտոսինթեզի ինստենսիվության օրական ընթացքը (ինձորենու տերևներում)



(գ.ձ.4) Փռտուխնթեզի արագության կախվածությունը լույսի ինտենսիվությունից (եզիալտացորենի օրինակով)



(գ.δ.5) ֆոտոսինթեզի կախվածությունը ջերմաստիճանից (եղևու օրինակով)

Փոխանցելով գիտելիքները ֆիզիկա յից, քիմիայից, կենսաբանություն յից, էկոլոգիա յից՝ արագացվում է գործնական ունակությունների ձևավորման համակարգը: Առանձին ունակությունը զուտ նախնական պայման է և գիտելիքների համակարգից դուրս կորցնում է իր որակը: Ծանոթանալով օպտիկական սարք սպեկտրոսկոպի կառուցվածքին և նշանակառությանը՝ քլորոֆիլի սպիրտային մզկածքի օգնությամբ, աշակերտները կենսաբանական կարևոր բացահայտում են անում՝ քլորոֆիլը ընտրողաբար է կլանում արևի ձառագայթները և դրանով իսկ բացահայտում ֆոտոսինթեզի քվանտային տեսության իմաստը: Այսինքն, կոնկրետ գիտելիքները միավորվում են համակարգակազմից, առանցքային գաղափարների, որն էլ նպաստում է

սովորողների մտածողության զարգացմանը: Շնորհիվ միջառարկայական կապերի աշակերտների մոտ ձևավորվում է շրջապատող աշխարհի մասին միասնական պատկերացում, հանդես գալով որպես ուսուցման մատչելիությունն ու գիտականությունը, զիտելիքների որակը բարձրացնող գործոն:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Է.Ս.Գևորգյան, Ֆ.Դ.Դանիելյան, Ա.Հ.Եսայան--«Կենդանի օրգանիզմների բազմազանությունը»
2. Ա.Գասպարյան, Է.Մելքոնյան, Վ.Գյուլազյան--«Կենսաբանություն» պրակ Բ
3. Մ.Թանգամյան, Զ.Սաֆարյան--«Կենսաբանության ընդհանուր օրինաչափությունները»
4. Դան Կառլսոն--«Բուսահոգեբանություն»
5. Կեն Հաշ Մուրո--«Ֆիտոպահուղղոգիա»
6. Լ.Ա.Սահակյան, Ք.Հ.Բդոյան--«Քիմիա»
7. Գրոմով, Է.Ղազարյան--«Ֆիզիկա»